Ուրվագիր երկրորդ

Երեմիայի Գրքի միջուկը

Գրվածքների ընթերցում. Երմ 2:13, 17:9, 13:23, 23:5-6, 33:16, 31:33-34

I. Երեմիայի Գրքի միջուկը երեք բան է ներառում. ինչ է Աստված մեզնից ուզում, ինչ ենք մենք մեր ընկած վիճակում և ինչ է Քրիստոսը մեզ համար. այս երեք բաները տեսնելու համար անհրաժեշտ է «կոտրել» Երեմիայի Գրքի պատիճն ու կենտրոնանալ ներքինի՝ միջուկի վրա, որն ամբողջ Աստվածաշնչի ավարտուն ուսմունքն է:

II. Այն, ինչ Աստված ուզում է մեզնից, գլխավորապես նշվում է Երմ 2:13-ում, որը բացահայտում է, որ մեր Աստված կենդանի ջրերի ակունք է.

Ա. Աստծու մտադրությունն Իր տնտեսության մեջ այն է, որ լինի կենդանի ջրերի ակունքը՝ սկզբնաղբյուրը, որպեսզի մեզ մեր վայելքի համար բավարարի. Նա ուզում է, որ մենք ընդունենք Իրեն՝ որպես մեր էության ակունքի՝ սկզբնաղբյուրի. Աստծուն՝ որպես կենդանի ջրերի ակունքի ընդունելու միակ ճանապարհը Նրան օրեցօր խմելն է՝ խ. 13, Ա Կրթ 12:13, Հռմ 11:36.

1. Սրա համար պահանջվում է, որ շարունակ Տիրոջը կանչենք (գոհաբանելով, ուրախանալով, աղոթելով ու փառաբանելով) և ուրախանալով՝ Նրանից՝ որպես կենդանի ջրերի ակունքից, ջուր քաշենք՝ Եսյ 12:3-4, Հվի 4:10, 14, Հռմ 10:12, Ա Թսղ 5:16-18, 4:3ա:
2. Եսյ 12:3-ը ցույց է տալիս, որ Աստծուն՝ որպես մեր փրկության, ընդունելու ճանապարհը փրկության աղբյուրներից ջուր քաշելն է, այսինքն՝ Նրան խմելը՝ Սղմ 36:8, Հվի 4:14, 7:37, Ա Կրթ 12:13, Հյտ 22:17, Ա Մնց 16:8, Սղմ 105:1, 116:1-4, 12-13, 17.
   ա. Մեր փրկությունը լինելու համար Եռամեկ Աստված պատրաստվեց, դարձավ կենդանարար Հոգին՝ որպես կենդանի ջուրը, կյանքի ջուրը. Աստծու գործնական փրկությունը պատրաստված Եռամեկ Աստված Ինքն է՝ որպես կենդանի ջուրը՝ Ա Կրթ 15:45, Հվի 7:37-39, Հյտ 7:17, 21:6, 22:1, 17:
   բ. Ակունքը սկիզբն է, աղբյուրը ակունքի բխելն է, արդյունքը, իսկ գետը՝ հոսքը. «փրկության աղբյուրներ» եզրույթը ենթադրում է, որ փրկությունը սկիզբն է, այսինքն՝ ակունքը. Աստված՝ որպես մեր փրկությունը, ակունքն է (Եսյ 12:2), Քրիստոսը փրկության աղբյուրներն է մեր վայելքի և փորձառության համար (Հվի 4:14), իսկ Հոգին այս փրկության հոսքն է մեր ներսում (7:38-39):
   գ. Փրկությունը վայելելու համար անհրաժեշտ է գիտակցել, որ Տերն Ինքը մեր փրկությունն է, ուժը և երգը, և որ Նրա անունը կանչելով՝ կարող ենք փրկության աղբյուրներից ուրախությամբ ջուր քաշել՝ Եսյ 12:2-3:
   դ. Աստվածային փրկության աղբյուրներից ջուր քաշելու ճանապարհը ներառում է ապաշխարելը, կանչելը, երգելը, գոհաբանելը, փառաբանելը և Աստծու փրկող գործերը հայտնի անելը՝ խխ. 4-6:

Բ. Երբ կենդանի ջուրը մտնում է մեր մեջ, այն ներծծվում է մեր մեջ, անցնում մեր ողջ էության միջով, ու մենք յուրացնում ենք այն, որի շնորհիվ սնուցվում ենք, փոխակերպվում, կերպարանակցվում և փառավորվում՝ Խ. 3, Հվի 4:10, 14, Հռմ 12:2, 8:29-30:

Գ. «Այն ջուրը, որ տալու եմ նրան, նրա մեջ ջրի ակունք կդառնա՝ հավիտենական կյանքի մեջ ներբխող»՝ Հվի 4:14բ.

1. Եռամեկ Աստված Աստվածային Երրորդության մեջ երեք փուլով է հոսում. Հայրն ակունքն է, Որդին՝ աղբյուրները, իսկ Հոգին՝ գետը:
2. Եռամեկ Աստծու հոսելն ուղղված է «հավիտենական կյանքի մեջ».
   ա. Նոր Երուսաղեմը հավիտենական կյանքի հանրագումարն է, և «մեջ» բառը նշանակում է «դառնալ». ուստի «հավիտենական կյանքի մեջ» արտահայտությունը նշանակում է դառնալ հավիտենական կյանքի հանրագումարը՝ Նոր Երուսաղեմը:
   բ. Կենդանի ջրից խմելով՝ մենք դառնում ենք Նոր Երուսաղեմը՝ հավիտենական կյանքի հանրագումարը, հոսող Եռամեկ Աստծու նպատակակետը:

Դ. Կենդանի ջրերի ակունքը լինելու առնչությամբ Աստծու նպատակը եկեղեցին՝ որպես Իր մեծացումը, առաջացնելն է, որպեսզի Իր արտահայտության համար այն լինի Իր լեցունությունը. սա է Աստծու տնտեսության մեջ Իր սրտի ցան- կությունը, հաճությունը՝ Երմ 2:13, Ողբ 3:22-24, Ա Կրթ 1:9, Եփս 1:5, 9, 22-23:

Ե. Աստծուց՝ որպես կենդանի ջրերի ակունքից բացի՝ ոչինչ չի կարող մեր ծարավը հագեցնել ու մեզ բավարարել. ոչինչ՝ բացի մեր էության մեջ բաշխված Աստծուց, չի կարող մեզ Իր արտահայտության համար դարձնել Իր մեծացումը՝ Հյտ 22:1, 17:

Զ. Անհրաժեշտ է գիտակցել, որ երբ էլ Աստծու մարդիկ կյանքի Հոգու՝ որպես կյանքի ջրի պակաս ունենան, նրանք խնդիրներ կունենան. երբ Աստծու մարդիկ փրկող Հոգու՝ որպես կենդանի ջրի լիություն են ունենում, նրանց խնդիրները միմյանց և Աստծու հետ լուծվում են՝ Ելց 17:1-7, Թվց 20:2-13:

III. Երեմիայի Գրքի միջուկի մեկ այլ տեսանկյունն այն է, որ մերկացնի այն, ինչ մենք ենք մեր ընկած վիճակում.

Ա. «Խաբեությամբ լի է սիրտը ամեն բանից ավելի և անբուժելի. ո՞վ կարող է ճանաչել այն»՝ 17:9.

1. Նույնիսկ այս խոսքը, որ վերաբերում է մարդու սրտի՝ խաբեությամբ լի և անբուժելի լինելուն, առնչվում է Աստծու տնտեսությանը՝ Նրա բաշխմամբ հանդերձ. թեև մարդու սիրտն ապականված է և խաբեությամբ լի, և վիճակն անբուժելի է, բայց նույնիսկ այսպիսի սիրտը կարող է տախտակ լինել, որի վրա Աստված գրում է Իր կյանքի օրենքը՝ 31:33, հմմտ Բ Կրթ 3:3:
2. Սա բացահայտում է, որ Աստված Իրեն մարդու մեջ հաղորդելու ճանապարհ ունի. երբ Նա մտնում է մարդու մեջ, մարդու հոգուց տարածվում է նրա սրտի մեջ. սա է ընկած մարդու սիրտը ներգործության ենթարկելու Աստծու ճանապարհը, որը Նրա տնտեսության համաձայն է:

Բ. «Արդյոք կարո՞ղ է քուշեցին փոխել իր մորթը, կամ հովազը՝ իր բծերը: Այդժամ դուք նույնպես կարող եք բարիք գործել, դուք, որ սովոր եք չարիք գործելու»՝ Երմ 13:23.

1. Աստծուն՝ որպես սկզբնաղբյուրի կենդանի ջրերի ակունքի, թողած լինելով (2:13)՝ Իսրայելը դարձավ չար՝ ունենալով անփոփոխ ու մեղսալի բնություն, ինչպես քուշեցու մորթն էր և հովազի բծերը, որոնք չեն կարող փոխվել. սա մերկացնում է ընկած մարդու ճշմարիտ վիճակը:
2. Ընկած մարդիկ լինելով՝ մենք ինքներս մեր մեջ, մեզնով և մեր միջոցով անբուժելի ենք և անփոփոխ՝ Հռմ 7:18, Մտթ 12:34-35, 15:7-11, 18-20, Ա Մնց 28:9, հմմտ Եզկ 36:26-27, Երմ 32:39-40:

Գ. Ամեն ոք, ով իսկապես տեսնում է Իր փառքի մեջ եղող Տիրոջ տեսությունը, իր խղճում լուսավորվում է իր անմաքրության առնչությամբ. այն, թե մեր մասին որքան խոր գիտակցում ունենք, կախված է այն բանից, թե որքան ենք Տիրոջը տեսնում՝ Եսյ 6:5, Հվի 12:41, Հոբ 42:5-6, հմմտ Ղկս 5:8.
1. Որքան շատ ենք տեսնում Տիրոջն ու մերկացվում, այնքան շատ ենք մաքրվում. Տիրոջ հետ մեր հաղորդակցվելը պետք է պահպանել՝ մշտապես Տիրոջ արյամբ մաքրվելով՝ Ա Հվի 1:7, 9:
2. Նորկտակարանյան իմաստով՝ Աստծուն տեսնելը հավասարազոր է Աստծուն մեր անձնական փորձառության մեջ ձեռք բերելուն. Աստծուն ձեռք բերելը նշանակում է Աստծուն ընդունել Իր տարրով, Իր կյանքով և Իր բնությամբ, որպեսզի դառնանք Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ:
3. Աստծուն տեսնելով՝ մենք փոխակերպվում ենք (Բ Կրթ 3:16, 18, Մտթ 5:8), որովհետև Աստծուն տեսնելով մեր մեջ ստանում ենք Նրա տարրը, ու մեր հին տարրը հեռացվում է. Աստծուն տեսնել նշանակում է փոխակերպվել Քրիստոսի՝ Աստվածամարդու փառավոր պատկերին, որպեսզի կարողանանք արտահայտել Աստծուն Իր կյանքով և ներկայացնել Նրան Իր իշխանությամբ:
4. Հենց այն Աստված, ում մենք այսօր նայում ենք, ավարտունացած Հոգին է, և կարող ենք մեր հոգում նայել Նրան. մեր առավոտյան արթնացման ընթացքում, նույնիսկ եթե տասնհինգ կամ քսան րոպե ժամանակ ենք ունենում, կարող ենք Տիրոջ հետ լինել, Հոգու մեջ մնալ:
5. Մենք կարող ենք աղոթքաընթերցել Նրա Խոսքը, խոսել Նրա հետ կամ աղոթել Նրան կարճ աղոթքներով. այդժամ կունենանք այն զգացումը, որ Աստծու տարրից ինչ-որ բան ենք ստանում, որ Աստծու հարստությունն ենք ներծծում մեր էության մեջ. այսպես օրեցօր կլինենք աստվածային փոխակերպման ներքո. սա լիովին այն բանի շնորհիվ է լինում, որ մեր հոգում նայում ենք հենց Իրեն՝ ավարտունացած Աստծուն՝ որպես Հոգու:
6. Որքան շատ ենք տեսնում Աստծուն, ճանաչում Աստծուն և սիրում Աստծուն, այնքան ավելի ենք գարշում մեզնից և այնքան շատ ենք մերժում մեզ՝ Հոբ 42:6, Մտթ 16:24, Ղկս 9:23, 14:26:

IV. Երեմիայի Գրքի միջուկի երրորդ բանն այն է, թե ինչ է Քրիստոսը մեզ համար.

Ա. «Ահա, օրեր են գալիս, ազդարարում է Եհովան, երբ Ես Դավթի համար մի արդար Ընձյուղ կբարձրացնեմ.... Եվ սա է Նրա անունը, որով Նրան կկոչեն, «Եհովան՝ մեր արդարությունը»»՝ 23:5-6, հմմտ 33:16.
1. «Եհովան՝ մեր արդարությունը» վերաբերում է Իր աստվածայնության մեջ եղող Քրիստոսին, իսկ «արդար Ընձյուղը»՝ Իր մարդկայնության մեջ եղող Քրիստոսին:

2. Այստեղ նշված անունը՝ «Եհովան՝ մեր արդարությունը», ցույց է տալիս, որ Քրիստոսը՝ որպես Դավթի հետնորդը, ոչ թե սոսկ մարդ է, այլ հենց Եհովան, ով ստեղծեց երկինքներն ու երկիրը, ընտրեց Աբրահամին, հաստատեց Իսրայելի ազգին և Դավթի Տերն էր՝ այն Անձը, ում նա Տեր կոչեց (Մտթ 22:42-45, հմմտ Հյտ 5:5, 22:16). Քրիստոսը եկավ որպես Դավթի Ընձյուղ (Դավթի որդին), ով Եհովան Ինքն է (Դավթի Տերը), որպեսզի լինի Աստծու մարդկանց արդարությունը (Ա Կրթ 1:30).
   ա. Ունենալով Նրա փրկագնումը՝ որպես հիմք, մենք կարող ենք ներհավատալ Քրիստոսին, որպեսզի ընդունենք Աստծու ներումը (Գրծ 10:43), և Աստված կարող է արդարացնել մեզ (Հռմ 3:24, 26) ու մեզ Քրիստոս հագցնել որպես արդարության պատմուճան (Եսյ 61:10):
   բ. Սա Քրիստոսին՝ որպես Եռամեկ Աստծու մարմնավորման, թույլ է տալիս (Կող 2:9) մտնել մեր մեջ որպես մեր կյանքը (3:4ա), կյանքի մեր ներքին օրենքը (Երմ 31:33) և մեր ամեն ինչը, որպեսզի Իրեն բաշխի մեր ամբողջ էության մեջ՝ Աստծու հավիտենական տնտեսությունն իրագործելու համար:

Բ. Քրիստոսն Ինքն այն կյանքի նոր ուխտն է, նոր կտակը, որ Աստված է տվել մեզ՝ Եսյ 42:6, 49:8, Երմ 31:31-34, Եբր 8:8-12.
1. Հունարենում թե՛ «ուխտ»-ի, թե՛ «կտակ»-ի համար նույն բառն է օգտագործված.
   ա. Ուխտն ու կտակը նույն բանն են, բայց երբ ուխտն անողը ողջ է, դա ուխտ է, իսկ երբ մեռնում է, դա կտակ է:
   բ. Ուխտը համաձայնագիր է, որ ուխտ կապած մարդկանց համար որոշակի բաներ անելու խոստումներ է պարունակում, մինչդեռ կտակն այն է, որ պարունակում է ժառանգորդին կտակված ու կատարված որոշակի բաներ՝ 9:16-17, հմմտ Երկ Օր 11:29, 28:1, 15, Երմ 31:31-32:
2. Օրենքի հին ուխտն Աստծու նկարն է, բայց շնորհքի նոր ուխտն Աստծու անձն է՝ Հվհ 1:16-17.
   ա. Երբ ներհավատում ենք Քրիստոսին, այս նկարի անձը մտնում է մեր մեջ, և Նա մեր մեջ կատարում է օրենքի արդար պահանջները, երբ հոգու համաձայն ենք քայլում և մեր միտքը մեր հոգուն սևեռում՝ Եզկ 36:26-27, Հռմ 8:2, 4, 6, 10:
   բ. Քրիստոսն Իր մահով կատարեց Աստծու արդարության պահանջները, որոնք Նրա օրենքի համաձայն են, և ի կատար ածեց նոր ուխտը (6:23, 3:21, 10:3-4, Ղկս 22:20, Եբր 9:16-17), և Իր հարության մեջ դարձավ նոր ուխտը՝ դրա բոլոր կտակված բաներով (Ա Կրթ 15:45բ, Եսյ 42:6, Փլպ 1:19):
   գ. Քրիստոսն Իր համբարձման մեջ բաց արեց նոր ուխտի գալարակը, որը վերաբերում է Աստծու տնտեսությանը, և Իր երկնային սպասավորության մեջ որպես Միջնորդը, Կատարածուն՝ Նա իրագործում է դրա պարունակությունը՝ Հյտ 5:1-5, Եբր 8:6, 9:15, 12:24:
   դ. Որպես Հուդայի ցեղի Առյուծը՝ Քրիստոսը հաղթեց և Սատանային պարտության մատնեց, որպես փրկագնող Գառը՝ Քրիստոսը հեռացրեց ընկած մարդու մեղքն ու մեղքերը, իսկ որպես յոթ

Հոգիները՝ Քրիստոսը մեզ ներարկում է Իրենով՝ որպես նոր ուխտի գալարակի պարունակությամբ՝ Հյտ 5:5-6, Հվի 1:29:

ե. Աստծու փրկությունը, Աստծու օրհնությունները և Աստծու ողջ հարստությունը մեզ են կտակվել, և այս ուխտը Քրիստոսն է. Նոր Կտակարանի բոլոր հարյուրավոր կտակված բաների իրականությունը Քրիստոսն է. Աստված Իրեն Քրիստոսի մեջ որպես Հոգու կտակել է մեզ՝ Ծնդ 22:18ա, Գղտ 3:14, Ա Կրթ 1:30, 15:45բ, Եփս 1:3, 3:8, Հվի 20:22:

3. Մեր հոգին նոր ուխտի կտակված բոլոր բաների «բանկային հաշիվն» է. կյանքի Հոգու օրենքի շնորհիվ այս բոլոր կտակված բաները բաշխվում են մեր մեջ և մեզ համար իրական դարձվում՝ Հռմ 8:2, 10, 6, 11, 16, Եբր 8:10, Հվի 16:13:

4. Նոր ուխտի կենտրոնը, պարունակությունը և իրականությունը կյանքի ներքին օրենքն է (Հռմ 8:2). այս օրենքն իր էությամբ վերաբերում է աստվածային կյանքին, իսկ աստվածային կյանքը Եռամեկ Աստված է, ով մարմնավորված է համաբովանդակ Քրիստոսի մեջ և իրական է դառնում որպես կենդանարար Հոգին (Կղս 2:9, Ա Կրթ 15:45). Նա այն Անձն է, ով պատրաստվել և ավարտունացել է՝ լինելու Իր ընտրյալ մարդկանց ամեն ինչը.

ա. Նոր ուխտով Աստված Իրեն զետեղում է Իր ընտրյալ մարդկանց մեջ՝ որպես նրանց կյանքը, և այս կյանքն օրենք է, ինքնաբուխ զորություն և ինքնաբերական սկզբունք՝ Եբր 8:10, Հռմ 8:2:

բ. Իր կյանքի համաձայն՝ նոր ուխտի օրենքը պատրաստված Եռամեկ Աստված է, իսկ իր գործառույթի համաձայն՝ դա ամենակարող աստվածային ունակությունն է. այս ունակությունը կարող է ամեն ինչ անել մեր մեջ՝ Աստծու տնտեսությունն իրագործելու համար:

գ. Ըստ էության՝ այս օրենքն Աստված է Քրիստոսի մեջ որպես Հոգին, իսկ ըստ գործառույթի՝ այն մեզ աստվածացնելու ունակություն ունի (խխ. 2, 10, 6, 11, 28-29). բացի դրանից՝ կյանքի ներքին օրենքի ունակությունը մեզ կազմությամբ Քրիստոսի Մարմնի անդամներն է դարձնում (Ա Կրթ 12:27, Եփս 5:30)՝ ամեն տեսակ գործառույթներով հանդերձ (Հռմ 12:3-8, Եփս 4:11, 16):

դ. Այն, որ կյանքի օրենքը մեր սրտի վրա է գրվում, համապատասխանում է նորկտակարանյան ուսմունքին, որը վերաբերում է մեր էության կենտրոնից՝ մեր հոգուց, աստվածային կյանքի տարածվելուն դեպի շրջագիծը՝ մեր սիրտը (Եբր 8:10, Հռմ 8:9, Եփս 3:17). Աստված Իր օրենքը գրում է մեր սրտի վրա՝ մեր հոգուց շարժվելով դեպի մեր սիրտը, որպեսզի այն, ինչ Ինքն է, գրի մեր էության վրա (Բ Կրթ 3:3):

ե. Մեր ներսում աստվածային կյանքի ինքնաբուխ, ինքնաբերական գործառույթի միջոցով մենք ունակություն ենք ունենում ճանաչելու Աստծուն, ապրելու Աստծուն և նույնիսկ դառնալու Աստված Իր կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, որպեսզի դառնանք Նրա մեծացումը, Նրա ընդարձակումը, որպեսզի Իր հավիտենական արտահայտության համար լինենք Նրա լեցունությունը՝ Եփս 3:16-21:

© 2020 Living Stream Ministry